# ՔՆԱՐ ՏԽՐԱԿԱՆ

## Ա.Զ.Դ

Նիւթ եղերերգութեանցս տուեալ է աղետաւորն այն արկածք մեծ՝ դիպեալ Յիսուսեան Հարց 'ի Ղազիր գեղջ Լիբանանու բարգաւաճելոյ. երբ զի յամի 1871 'ի 28 ամսեանն յունիսի իջեալ նոցա 'ի ծովեզրն Փիւնիկիոյ ամենայն աշակերտելովքն իւրեանց ըստ սովորութեան, յալէծուփս անդ՝ միոյն 'ի մանկանց լինի պատուհասից ջուրց հանդիպիլ, և արագավախճան զմահ ճաշակել. 'ի նորա ազատութիւն նահատակեալ երկուց 'ի մեծամեծար հարանց, առ սէր եղբօր զնոյն վախճան վախճանին:

Ընդ այս բոթ և մեր իսկ աղէկտուր խոցեալ, որ զնոսա յականէ յանուանէ ծանեաք, 'ի յիշատակ քաջ անուան նոցուն՝ արձանացուցանել զայս քերթուած ձեռն 'ի գործ արարաք յօրէն յայնմանէ:

Ի Լիբանան 'ի 20 յուլիսի 1871:

ՍԻՍԱԿ ՄԵՐՈՒՆԻ

## ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### Ա

Զո՞ր թուխ յալիսդ հեղձցլալիս, Միջերկրական,
զո՞ր թուխ յալիսդ հեղձց անէծըսգառութեան,
որ մոլեգին մեծացն այնց մեծ հասուցեր զեան,
մահու գեղեալ ըղկապուտակ քոյդ կերպարան:

Զիա՞րդ այնպէս հեծեծել քո զօրէն գիւաց
շուրջ Ղազիրու արձագանգաց յաղթել յաղ- [թեաց,
և փութապէս հովիտըն զայն նըսաոյց 'ի լաց,
զոյգ ընդ նըմին որչափ յերկրի գոն աչք անթաց:

Ա՜հ, ես յորձանսդ հեղումըլալիս, Միջերկրա- [կան,
ըղխոժոռ դէմըս ծածկեսցէն ցաւքս անվախճան,
ուր վաղամահ արբունք երեք զուարթնոց նըման
միոյն կամաց և սիրոյն զոհք այնպէս կորեան:

Դուք, ժամք գըժբաղդք, որք զայս արկած ծը- [նայք նըմին
դարձայք, դարձայք, եղերերգութիս պատմել [մեկին,
զի արարից գիտել անխառ մարդկան ազին
թէ Յիսուսեանք անմեռ անուամբ կեան, մեռա- [նին:

### Բ

Ըզմանկըտւոյ երամ երամ ըստ մեղուաց պար
գեղգեղելոց 'ի յեմաստից ծաղկանց կատար՝
յաւուր միում ջերման Յունիս բերկրապատար
դէպ 'ի ծովափն առեալ վարէ 'ի հովահար:

Անդուստ շարժեալ սեաըն ուսմանց անխոնջ [որդեք
խումբ խումբ դիմեալք գընան, խընդան խըռնին [հերիք.
հանդոյն ծիծառունք 'ի ջերմ կողմանց յաշխոյժ 'ի [ճիկ
երամովքն գան յերկիր մեր 'ի գարնան սիք:

Ընդ զառ 'ի վայրն հորդել բնաւից արձակ ար- [ձակ,
խընդակիցաբար թնդոս առնուն ծեր լերանց կո- [հակք.
իսկ ըզդըլխով այերք պայծառք 'նդ ոտիւք դաշ- [տակք
ափըս զափի հարուն զարդուք դիմակ դիմակ:

Անդ 'ի մեծի 'ի բազմութեան բա՜ց 'ի ծերոյն
փայլեալ նազըն սեգ մարդկութեան հասակք [ողջոյն,
յոյնըս տածի Լիբանանու ուշաց հաճոյն.
տեսողն ասէ, «Իցէ՞ քան զայս գունդ բարեմոյն»:

Ի միջակին վէհ երեւեալ անձինք անգին
որպէս բարձանց 'ի լուսաւորս արեւ, լուսին,
Հարք Յիսուսեանք բուն պաշտօնեայք փառաց [Փըրկչին
ոյք և պըսակք ողջ միանձանց արտափայլին:

Այսդոյն ուրանն յամբոխ հարուստ դէմ ե- [դեալ գայ
այսդոյն կոխել զըմպան աւազըն Փիւնիկեայ.
մօտ վաղեմի 'ի Սամըլթայն կամուրջ հըսկայ.
ուր ծիծաղ ծովծանծաղ ծոցով ծաւալ ծուլայ:

digitised by A.R.A.R.@

Անդէն նորոգ 'ի տխուր ծովուն սիրտ բոլորից
տատանեալ, Թընդեաց որոտիւ հառանդնալից.
քանզի և միոք զանգիտողաց նոցա կըսկիծ
բաւէին ինչ գուշակել. դէպ չարաթախիծ։

Յայնժամ վայրի գանչեաց ազինձ ազդեցութե՛ն,
ըղձաց և ծով, առնու մըրմռալ երբև գաղան.
բայց նոքա զինչ. — ունչս արարեալ աներկեան
'ի տխուր մտաց Սաղիմացւոց ձերմակաճան։

Հարկանի դաւյթ, խուժեն 'ի ջուրս 'ի յանդա-
[գարս
'ի մեղմ ճողփիւնս գիտեալք 'ի մի կայտռել 'ի
[մարզ.
զոր օրինակ 'ի փարախի դիեցկաց պարս
վազէն ունել զըստեանց պըտկունս կաթնաշա-
[թարս։

Գ

Զեւ անդ այնպէս զմիով վայրք գըրգեալ
[համայնց,
'ի գըժոխոց 'ի ծով դիմէ նիհար նախանձ.
և չուառժիր շարժըեալ ըղջուրց զանըսպառ
[գանձ
գոգցես առեալ մառուցանէ ջեռոյ յանսանձ։

Իսկ առ՛ անդէն ջուրքն հանդարտիկք այսա-
[հարին
ուռնուն 'ի գոյն լուծեալ ըղդէմս 'ի յօճառին.
վարազաբար հրոսեն 'ի ծիրն անհընարին
ըստ փըլածից անկման հարուն, գոռան ուժ-
[գին։

Ալիք զալեօք կուտեալ գիզեալ և լեռնանան
նըշմարելով ըղհողագունան յանհուն ցասման.
նաւք և նաւակք յերկունս ահի լըլկին տատան
մինչ 'ի լոյս գան աշխարհական խորք մըշտըն-
[ջեան։

Անդ էր ըղձա հետ ըղհեռէ բաղխել հողմոց
զոր օրինակ բաղխեն զՊոնտոս յիւրըն պըրկոց.
անդ յորձանաց պըտուտակել անլիր 'ի ծոց
անզերծ դարձն գործել ընդ այն ռահորդելոց։

Ի նոյն պահու դիւադնելով տակաւ տակաւ
'ի գուրս ժայթքէ մամուռ և վէմ, ժըժմակ ամ-
[բաւ.
լուղակն անբան տեղի տըւեալ խուսէ բարեաւ
բայց բանաւոր լուղակաց զինչ արդեօք գիպաւ....

Տեսի՛լ ահեղ. սարսափիմ ես... իսկոյն 'ի քէն
ալիք կըրկին ըըրդանըմանք վայրենօրէն՝
չէշտ զարկուցեալ ցանեալ ցըրուեն ըղխումբն
[ամեն,
մինչև երկուց առ միմեանս, ո՛հ, չըկալ անդէն։

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. ո՛ւր իմ արդեօք եղբարք
[սիրուն
Ըստեփաննոս, Զաքարիա, 'ի ջրոց նըկուն,
ուր և Յակովբ և Գաբրիէլ յերկիւղ մահուն.
սուրբ Միքայէլ, ողջամբ նոքա դարձցի՛ն 'ի տուն։

Անէծք ալեացդ այդ հըրէշից, որք զայն հանդէս
փոխեն 'ի ցաւս. զի անդ նոքա տըժգունեալքս
խուճապ յահեղ ըմբըռնելով և կիրս պէսպէս,
ընկեր զընկեր խընդրեն կարդան ձայն աղէկէզ։

Լինի տագնապ մահաշըշուկ յոյժ ցաւագին,
որպէս լինի տարեորդ յուլուց խաշին
'ի սըպըրդիլ անդանօր խեռ գայլոց ազգին
և 'ի պըրծել զանձինս դընեն ջան երեքկին։

Փաշ լուղորդաց իսկ նայեցեալ 'ի ջրոյն պը-
տոյտ,
տատանելով խուսափէին չըրթնակապոյտ.
թէ անդանօր համախըմբէր և կետից կոյտ
անչուշտ իւրեանց ազատութեան առնէին փոյթ։

Իսկ յամերամ մատաղ տըղայք որք յափունս
[մօտ
լեալ խաղալիկ փըրփրատեսակ ջուրց մահահոտ
ձայնեն ողորմ. « Ահա խառոյք ծովուս աղօտ
կանաչ տխուր ամփոփեցեն փափկիկ ծըղօտ »։

Դուք երկնաբնակք միայն այդ գիտէք քաջիկ,
թէ զիա՞րդ այս պատահար գոյր չարեաց չարիք.
և թէ 'ի չար յայն տագնապի արդեօք քանի՞ք
Հօրն անմահից ուխտէին ուխտ գերաշխարհիկ։

Դ

Մինչ այս մինչ այն 'ի հանդիպման արտասուելի
վարանէին ամենքեան 'ի շըփոթի,
ճարտար լուղորդ մի քան ըզմի 'գործ առելի
անդուլ ճըգնին թափել զեղբարս աստի'ւ անտի։

Է որ ըղձինդ, է որ ըղսասն, է որ քըրտան
մըղօն տալով 'ի դիւր վարէ նախաժաման.
ընթանայ ոմն, 'ի զանդ փոքրիկ առնէ նըշան
սիրտն 'ի բերան աճապարել յերկրի սահման։

Յայն ձայն յանկարծ ալէկոծեալ հեք երա-
[մոյն
արտաքս հարթչել բուռն արարեալ միահաղոյն.
առ 'ի ապրել յորդայթէն ահագնագոյն
մուացօն եւս էլով զոփ կըլանելոյն։

Ի սեաւ ժամուն արկածիցն այնց ծովածածուկ
աղատարարք գէր քան ըզըմնաւըս կան երկուք.
Մեծն այն Դրդյեան վէհ Բարթողէն ուկի խօսիւք,
և Մաքսիմոս որ 'ի Ծոյդան տարաւ մեծ չուք։



digitised by A.R.A.R.@

Շատք են շատք են որ 'ի ձեռաց սոցին յայժ- [մուս
լեալ մազապուրծք՝ ընքաղցրութեան տեսանեն [լոյս.
մի և այլոց մտաւոցին երկք կենդանարոյս.
ոյք զովեսցին ցորչափ տեւեն անդունդք ծովուս։

Հայրըն Դրոյեան և այլք բազումս անդր 'ի [ցամաք
հանեալ փութով նաև ինքեանք խոնջ և վաստակ
գան՝ զուաղով տանկանեն երագ երագ.
այսչափ մարդոյ քաղցր է իւր կեանք և սիրունակ։

Բայց Մաքսիմոս մինչև 'ի վերջին անսըրտաբեկ
կայ փըրկանակ մընացելոց ամենուրեք.
ով քաջազինդ, 'ի յաւիտեան պատկերդ 'ի չէկ
ճաճանչեսցի անմահական լուսոյն պատչէկ։

Եւ մինչ նաւադեռ աստանդական գործ վըճարէր,
հասակ մի նոր յորորս ալեաց յանվերջ երեր
անօգնական սոսափելով աչք 'ի յեթեր՝
աղաղակաւ 'ի յորձանս ինչ հոսի վեհէր։

Տեսանէ զայն Լուդովիկոս Մազեան հայրն հեզ.
գոչէ. «Եւ ես վասըն սիրոյն զոր ուսոյց մեզ
մարդացեալ Տէրն՝ եդից զանձն իմ փըրկել ըզ- [քեզ
թէ և այնչափ չեմ ինչ յաջող յայս ասպարէզ»։

Ասէ, արագ ըղձեա կըրթի, և անցք ընդ նա
նոյն անցանեն 'ի պըտուտիցըն կորըստեայ.
ընդ որ տեսիլ ողջ ըղձայուն և անըղձայ
պակուցեալք կան, ցաւեալք որչափ վայելչանայ։

Այսպէս սոքա կենդանութեամբ յար անմեկին
նաև յիւրեանց մահուան եղեն 'ի միասին.
մին վարդապետ և միւսն համբակ ջինջք երկոքին.
վըտակք յըստակ դարձան անդրէն ուստի ելին։

Վաղվաղակի հընչեաց չըռինդ անկման սոցուն,
խըռովեցան որդոն խռովի պաշարեալ տունն.
ապրեցուցիչք ձեպ տան սուրալ յազատութիւն.
ընդ զառ 'ի վայր հոսեալ ջուր սիրտք էին համ- [բուն։

Իսկ ըղտեղեաւն Հայր դպրութեց և ախոյեան
գերամեծար Հայր Փրանկիսկոս Պուալոյեան,
որ 'ի բացուստ յակձիռ զըննեալ զայն տեսարան՝
յեղակարծուց հրաման օգնով քաջարութեան

Իբրև ըզնեա յաղեղանէ, կամ իբրև շանթ
յամպոյն՝ լերին վայրաբերեալ 'ի գահաւանդ,
կամ իբրու վագր որդեկորոյս անշարաւանդ
վաղէ 'ի ջուրս. չըգիտեմ մարդ՝ թէ սիրոյ խանդ։

Վաղէ մըխի քան ըզթըռաձուկն 'ի լիւղ գալով.
ծով քան ըզնա չետես լուղորդ քաջակորով․․
ով դու, այդպէս յով թաւալիս խաղաս ձեպով —
բայց եթէ զքոյ փըրկել զեղբարս աղէխորով։

Նըմա յայնժամ Մաքսիմոսի պընդեալ ըղձեա
դիպի, ասէ. «ո՞ւր Հայր արդոյ գայք ետ ընդ ետ,
հիմ և ըզձեզ խաղ արասցէ ծովս ալեւէտ.
դարձարուք, Հայր, համառօտեալ է այն աղէտ»։

Երկիցս երիցս աղաբանէ անձն հոգեկիր,
«Ինձ որդեակ իմ, ինձ Մաքսիմէ, խոչ մի լինիր.
վասն Յիսուսի, և Մօր սըրտին կենդանաձիր
թո՛յլ տուր ձեպել. յօգն ընկերին հասանել ժիր»։

Սիրոյ եղբօրն այս են օրէնք, ցըյետին շունչ
'ի հարկի անդ նոցին թափել ձիգն անշըշունջ.
ո՛ն անդր յինէն ըզսոյն եւեթ տանել ընդ ունջ,
սէր պըսակի աննիւթ ծաղկանց բիւր յոսկեայ [փունջ»։

Նա ասէ. «Ի՞ւր իցէ որդւոյ զհայր սիրալիր
յըստոյգ վըտանգ չարեաց թողուլ անկարեկիր»։
Պուալոյեանն՝ «Աստուած տեսցէ. խոչ մի լինիր.
զի՞ կայ իմ այլ զատ յայնց եղբարց կոխել զերկիր»։

Եւ այլ յոլով բանից մեծին նա անլըսող,
'ի մերձակայըն գանգաչէր գանգաղ 'ի լող.
մինչև հազիւ աչկունք նորա արտասուացող
'ի քըթթել մի շուրջ հայեցեալ լուսադոդող՝

Դառնան ըզնա տեսանեն ո՛չ. աւա՜ղ չէր այլ.
սիրտըն գէլու, պաղի արիւնն և դէմքն այլայլ
յուսակըտուր յարփւոյն նորա 'ի գերափայլ
'ի ծով ցաւոց սուզեալ թողու ըզծով մըռայլ։

## Ե

Գոյժք 'ի միջի ըստուգութեամբ յածին թա- [փառ
եթէ զերիս 'ի նոցանէ 'ի մի պատառ
յիւրում քաղցի խըլեալ եկուլ ծովըն թըշուառ.
և ըղքսսանք դառնան 'ի սուգ և վիշտ անձառ։

Ուշեղ գըլուխք խոնարհէին 'ի տըխուր հոգ,
քանզի ըզսիրաս ելից բնաւից հրեղէն մորմոք.
խուն մի յառաջ դէմքըն վարդեայք արիւնոտք
նըւաճելով նըւաճէին 'ի գալկան գոգ։

Օրինակ իմն անաղտ շուշան 'ի պարտիզի
'ի յարմատս իւր բռնիւ հարեալ թերանացի
արեգականն յերկնագընտին միջակէտի
ճառագայթել՝ ասթակիզեալ ցըմահ խամրի.

Ոմանց անդէն օրհաս անձանց յոյժ քաղցրա- [նայր,
ոմանց մաշել. այլոց սահել խաւարին յայր,

digitised by A.R.A.R.@

կիսոց բանտիլ, 'ի տայրասուր սուսերի սայր,
քան թէ անդ կալ և տեսանել զայն չարեաց ծայր։
Ո՛վ, գերարտօսր ողոռն ողոռն այն ինչ վիժէր
ըզտարափոցն ապրիլի Ձիւդ բերէր պատկեր.
մինչ զի զայն օր ամուլ աւաղն այն ծովեզեր
քան 'ի յալեաց 'ի յարտասուաց թացեալ լինէր։

Այս առաջին էր հեծութիւն բոլորեցուն.
« Հոգւոյ սոցա գիւրեա՛ լուսովք, Հայր ինքնա-
[բուն »։
Ապա աշխար աղիողորմ բարձր 'ի լալիւն,
լըցեալ զոլորտս 'ի յաշխարհի յանէ ձեղուննս։

« Եւ արդարե՛ւ մեռան, գոռան, վա՜հ. և զիա՞րդ
հօրամոյն Ձեա Մաղթեան մեռաւ պատանեաց
[զարդ.
Հօրըն Մաղեան 'ի սպառ չիջա՞ն ոգիք զըւարթ.
անշընչացա՞ւ Պուալըյեանն յոյժ բարեմարդ...

Լերանց լերանց և 'ի բըլըոց ծագ կարգ 'ի կարգ
թուխս ըզդէցեալ արձանասիրք եղերամարք.
ձա՛յն տուք հանուրց ողբացէք ողբս յաւուրս
[ձեռնարկ.
ես առաւել ըզմեզ զորդիս լացէք. բարկ բարկ։

Եղա՛ւկ սըրտիցս. եղո՛ւկ որոց ցամաքին արգ-
վա՛յ. 'ի ցաւոց տաչորեացին իբրև ըզյարդ.
զի Հօր Մաղեան ըզմեզ թողին ոգիք զըւարթ,
և ո՛չ դառնայ Պուալըյեանն յոյժ բարեմարդ։

Իբրև այսպէս ողբէլալիք սաստկանային,
Հայրըն Դրոյեան յօրսայս անկեալ 'ի յաւազին
'ի վեր վազեալ 'ի լուր մահուան իւր ընկերին
որպէս հըզօր զի թափիցէ զՀայոց գինին,

Առիւծաբար 'ի ծով դիմել թափ տայ անձին
կամ ազատել կամ մեռանել անդ ընդ նըմին.
քանզի ուրուք գրաւեալ ըզսիրտ սէր սաստկա-
[գին
ըզմա՜հ նըմին տա՛յ գըրել ինչ աղէտք վերջին։

Ամենեքին 'ի զիլ կանչիւն և դասադաս
գեդգևէլոյն դիմագրաւեն բոցատարաս.
շըրջափոխեն, գոչեն. «Է՞ր, հայր՛ թէ այս վընաս
սակա՞ւ իցէ, զի բարդիցէք զայլ ոչ նըւազ »։

Նա այլ յայլմէ տրոփմամբ ոտից շարժմամբ
[գըլխոյ
անհանդարտեալ զէտ զոհելի ամեհի խոյ
ցըրուել ուժէ զխափանարարս 'ի յառաջոյ.
և արձակէ բարբառ հրաշունչ 'ի ձայն ազդոյ.

« Ձե՛ք և չե՛ք ժոյժ... սիրտ պատառի... եր-
[թայց սառի,
իմ տեղի այս չէ ապաքէն. չէ՛ այս տեղի.
անդ, անդ լինել առ ընկերացս ինձ արժանի.

մընա՛յք բարեաւ, հապա թոյլ տուք վիրաւո-
[րի »։
Եւ զի՞նչ այդ բանք ո՛վ Բարթողէն պայծառ-
[ութեամբն,
իցէ՞ հընար ըզքեզ թողուլ յեա կորըստեան
ընտիր գըլխոց. յորոց նըշխար դու միակն.
մեք սանձեսցուք ըզքո հրաշատեսանդն արեան.

Դու առ նոսա ոչ երթիցես, այլ քաջ նոքին
գայցեն առ քեզ. թէպէտ մնացեալ միայն մարմին.
ո՛ն, յարիցեն վաստակաւոր եղբարք քոյին
ըզցանկալիս բերցեն պարգև մերոյ խըմբին։

Բայց անձնագէտ երիտասարդն անձկոյ հընոց
ջեռեալ 'ի կրից հաչէ, հաչի, կոծի մեծ կոծ.
ձեռս տատանէ, շունչ փորատէ, շունչն է հրա-
[բոց.
բոսորային և լիճ լուսոյն գունակ արծուոց։

Յուսոց վերայ մերթ 'ի յայս կոյս և մերթ յայն՝
գըլուխ թեքեալ իբր ուշաթափ և խառնաձայն.
մէջք խորտակեալք, և ծունկք կըթոտք, սակս
[զհամայնն։
կարեկցութեան ոչինչ ընդհատ կարօտէր նայն.

Զ

Բայց դու զի՞նչ ես անլուր գաղան ծով ծոցա-
[ւոր
որ ցաւարեր առն առն ոճրովդ լինիս այսօր.
սակայն ցայս վայր մոլեգնութիւդ. արդ աստանօր
հարկիս զաւարդ փոխաբերել իբրև անզօր։

Եւ դու պըտոյտ մոլի ջըրոց. ա՛յ շատ գըժխեմ,
ցե՞րբ ժըպրհեսցիս ուղևորաց խաղալ ընդդէմ.
պահանջողաց ազգ ազգ առեալ գերավըրեմ
'ի վերայ քո յալուցեալ զան աղատագէմ։

Ըստ ակնարկին խընդրակ եղբարց ելեալ վազ-
[վազ
ըզմըկանուսնս յանցման ջըրոց առնելով խաղ,
զան ժամանեն ուր էր նոցա մահուն կաղաղ.
ուր երեքին մի մի արբին ըզխեղդման ձաղ։

Գիրգ պատանւոյն ընկղմելոյ մինչև 'ի տակ
Ծաղկեալ իրան սեաւ քան զծով կապոյտ հա-
[մակ.
այնքան ողորմ, մինչ զի նորուն միայն գիտակ,
ահացուցեալ էր զամենայն ջուրըս լուղակ։

Ո՛չ յոյժ հեռի 'ի նըմանէ Հայրըն Մաղեան
տապաստ անկեալ զենլի բըծի համանըման.
բայց իւր մարմին ըստ առաջնոյն լուսակերպեան,
թէպէտ անշունչ սակայն շընչէր շունչ քաղցրու-
[թեան։

digitised by A.R.A.R.@

Իսկ Փրանկիսկոս կ՚ընդանեաւ միշտ զըսքան-
[չելին
'ի մանկութեան ևս ըսքանչելի մտաւոր տեսին.
կալով նորա յատընկեալս ձեռք 'ի յերկին,
ուռուքն անկոխ յըստոր ծովուն անդընդային,

Զի ո՞ւր երբէք անփառունակ հանդիսանայ
հոգւով խոնարհ հաւատարիմ տեառնըն ծառայ.
կամ ո՞ անարգ համարեցի զվախճան նորա,
զոր պատրաստեաց իմաստութիւնն անեղն արքայ։

Յետ այսորիկ 'ի գահ յառեալ կալ կաճառուն,
յերևան գայր քըստմընելին ցուցակութիւն,
ցուցակութիւն, որ թէ զասուն թէ զանասուն
կականալիր յոյլք յորդորէր և հեծութիւն։

Ցուրտ դիակունք 'ի քաջասեր ձըգեալ հերոսց
անդամալոյծք, և լըպըրծունք քան ըզզանդուած
մի ըզմիոյ կընի 'ի ջուրց ածին 'ի բաց.
արքն հաստատունք փոխակերպեալք վըշտոյ ծե-
[ծած։

Ո՛ 'ի նոսա զակն աներկիւղ տայցէ յայնժամ,
ո՞ հըպեսցի և ժուժասցէ տանել խընամ,
դիտապատել գոնեայ ըզմի ևեթ անգամ.
զի թախծութեամբ զայրագնին ցաւք գամ քան
[ըզգամ։

Մանկունք յահէն յետս յետս երթան, այլք
[նըւաղին.
ոմանք անշարժք յարտոսր անզուսպ ցընդեալք
[ընաւին.
եթէ ցայն վայր գըտանիցի ոք՝ որ 'ի սըրտին
խոր տըրտմութիւն ոչ ըզգածէր՝ չէր երկրածին։

Զի զի՞նչ յայնժամ հանդիսայնոց կայր տեսա-
[նել,
բայց եթէ նախ ըզպատանին տարոյգ ու ընդել,
որ անձկալի կանուխ հատեալ կենացն ուրբ թել
որ և ներկեալ գոյն երկնագոյն գընէր անել։

Երեսք թարշամ, 'ի թաւ մածեալ գէսք վայրա-
[վատ
և խաւարեալ գաղտագոյն ճերմակ ճակատ,
կուրծք եփելոյ խըմորոյ պէս այտուցաշատ
նա՛ ուղ մաշեալ յախտակրութեանց 'ի խոր-
[խորատ։

Ըզնա կոծին 'ի յարտասուաց աղի աղբիւր
սիրուն արիւնք և կարճ կենաց իւր խանձարուր.
ըզնա կոծին զի 'ի թաւուտ վարսից գանգուր
չըժամանեաց փառաց պըսակ կապել լախուր։

Բըռնահարեալ 'ի գոռ ալեաց երբև ըզլաստ
յամուրս յուսոյն տապալեցաւ ալեատատ.
հայրենակիցք, յաշխարհելոյ մի՛ կայք յուրաստ.
վաղ կորուսէք փառք զուստերաց մարմին ըզ-
[գաստ։

Յամբոց գահէն օծեալն Աստուած այգուն
[զակն հաշտ
'ի խորանէն արկեալ նորին յաղօթից յաշտ,
էջ յերջանկին սիրտ մաքրական և բարեպաշտ.
և զմիջաւուրքս կոչեաց խառնել 'ի սըրբոց վաշտ։

Ըզնա կոծին 'ի յարտասուաց աղի աղբիւր
սիրուն արիւնք և կարճ կենաց իւր խանձարուր.
ըզնա կոծին, զի յիւղաթուրմ վարսից գանգուր
չըժամանեաց պըսակ փառաց դընել լախուր։

Երկրորդ՝ զաղուն Լուդովիկոս սիրով յուսթի
զոր կարծէին տեսողք անկեալ ձոյլ արծաթի.
որչափ երբեմն էր ջերմ նորուն չինուած սըրտի
այնչափ յայնժամ անմերձ ուժեք պաղեալ ցըր-
[տի։

Մանրիկ չըրթունք վառեալք յառաջն յորդան
[կարմիր,
ակն յանդիման կան կերպացեալք գունատ մո-
[խիր.
իսկ տէգք այտիցըն գեղանիք կալով ըսփիռ
'ի խոցոտել տարրացեալք են փուշ և ակիր։

Դեռըն թառանչք... ըզնա լալով լոյ Փուան-
[կաստան
յարուարձանս իւր ընդ գեղատունկըս միաբան.
և անտանոր ջուրքն ամօթով յամելով գան
զի մայր նոյին ըսպան չարաւ զհայրըն Մաղեան.

Երրորդ ուրեմն ըզՓրանկիսկոս արանցն այն այր
որ քաջապէս դիակնացեալ ընդ աւաղ գայր.
պարանոցին գեղ պանծալի հարեալ ընդ վայր
ագամանդիկ լանջքն ալարտեալ յօրհասին
[ժայռ։

Իբրու ըզնաւ վաճառական փարթամ գոյիւք
եմուտ 'ի ծով. բայց հողմն աջող դարձեալ 'ի բուք
ներհուն ըզկողն յիմաստութեան ծովուն ան-
[ձուկ
ընկըղմեցաւ. որոյ արդ ելք յանցքն 'ի սուգ։

Դեռըն թառաչք... ըզնա լալով լոյ Փուան-
[կաստան
'ի չինաւանս ընդ գեղատունկըս միաբան.
և անդըր ջուրք ամօթապարտ յամելով գան
զի մայր իւրեանց ըզհայրն եսպան Պուալոյեան։

Աստղանց, ծաղկանց և մատենից ընդ մահուն
[բոլթ
ըստուգիւ է ողբովք լընուլ ըզմիր զայս օդ.
փոխանակ զի պարզ դըպրութեանց ընտիրն անօթ
սիրէր զինքեանս ըզչըքնաղ իմանոց վանեալ վարկ խօթ.

digitised by A.R.A.R.@

Լո՛ւր, Ճի՛չ քաղցրանոյն սիւնք վարժոցին յաղթ
[Պալիրու.
զորոյ չէ բան որ քեզ պատմել կիրքս կըծոււ...
զի Փրանկիսկեայ քանին եղև վերահասու,
թէ «Ճըշմարտիւ իմ մերձեալ է օրհասս մահու»:

Ծովակն անդամ՝ որ անուանեալն լուրեաց ըզ-
[դաւ,
յեղերանէն խոնարհնի հուսկ 'ի յապաշաւ.
դուցէ և մահ զաւածանող. բայց քաղցրաշաւ
աստեղագեան եւ առ աստղունս լոյս ըզգեցաւ:

Ձայս ամենայն ակնեռելով ամենեքին
առ կըակըծմանց հեղձամըղձուկ հիւծեալ մաչին.
ապա ըզգլխ պատեալ քարձեալ ըստ օրինին՝
լուռ և տըխուր դէպ 'ի Պալիր ուղղոյ լինին:

Է

Հարաւ հըաչակ ընդ ամենայն կողմանս երկրին
գըղըրդեցան, փոյշ քըստմնափուշ յոգւոց հա-
[նին.
քա՛, արարածք խառն ընդ որդիս մարդկան սեռին
ըղտուրս աչաց աղբերաբար թորեցուցին:

Լըսել լըսաւ քարեհրաման վանացըն պետ,
ասաեաւ, գոչեաց «Ի վերուստ գայ և այս սուր
[նետ.
աւա՜ղ, կորեան երկուք յորդւոցս յանդընդոց
[մետ.
հից իշխան կամքդ օրհնեացի այժմ և յաւէտ»:

Անդուստ հասեալ յաւանն եմուտ խումբըն
[ձախորդ
և վերըստին շարժեցաւ հողն 'ի խիստ դըղորդ.
ըընակք ջոկով ընդ փոյթ 'ի դրունս հեղեղեն
[յորդ
ուր լալնից և ցաւմանց ոք չէր անհաղորդ.

Առ դուրս հասեալք վարժարանին աշխարհա-
[չէն
կառչին 'ի կայս շըւարելով թէ յինչ օրէն
ելեալք անտի տըրտմագդեցիկ դառնան այսրէն,
մառախլապատ բերեալք ըզջահսըն լուսեղէն:

Փոքըր միւս ևս առ մորմոքման չէնն հոյակապ
անշուշտ զհիմունս իւր մերկանայր ըշտապ ըշ-
[տապ.
եթէ ոչ էն սակաւիկ մի զայն չար տագնապ
գիւրէր նըմա. ամրապընդեալ ըզյուսոյն կապ:

Մըտին 'ի ներքս. ախորժ բարբառ անդ լու եղև
« Բարեաւ եկին մարմինք սըրբոց տիրապարգև.
մարմինք սըրբոց անքուն պահնորդք, զի ակներև
նոքօք յարկաց մեր ծագեսցին փառք յարատև »:

Փութանակի յամէն ուստեք գան ժողովին
'ի յաւագաց մինչ 'ի կըրտսերս զարմ հողածին.
'ի հրաշափառ սըրբոյ թաղման ըսպաս յետին.
և փառաւոր հանգուցանեն 'ի գիրս շինին:

Բարեա՛ւ, Ճըքրի. բարեա՛ւ, ո՛ հայր Լուդովի-
[կոս.
բարեա՛ւ և դու լիահանճար հայր Փրանկիսկոս.
բարեա՛ւ գնացիք՝ յերկրէ բուրեալք սիրոյն նար-
[դոս
առ կենդանեաց գրախտին վըտակըն գեղահոս:

Գոչեա՛ քնարդ իմ, թէ ըստ հարանցս ըստ այ-
[սոցիկ
լինի քաղնալ զանհըրաժեշտ մահուան կարիք.
գոչեա՛ քընարդ՝ թէ Փրանկիսկոս և Լուդովիկ
զանձրևածին աղեղն երկնից կոխեն այժմիկ [1]:

[1] Որպէս կանխեալ ծանուցեալ է մեր այլուր, վերջ-ատին կըկնեմք զի այս Եղերերգութիւնս, որպէս և Եր-գոյն Ի Շէրանից Լոփոն, ստորագրեալ ընդ պաշտօնէական անուամբ Սիսակայ Մերուժնայ, ոչ այլ ոք է քերթող՝ բայց Մ. Յր. Ուզունեան Վարդապետ, զորս հրատարա-կեմք 'ի Բազմավէպիս 'ի հանդէս եւեթ զկամս թախանձա-նաց նորա: